



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

«Պատմական հուշարձանների և կուլտուրական մյուս արժեքների պահպանության նկատմամբ հոգատարությունը Հայկական ՍՍՀ Բաղաճառների պարտնե ու պարտականությունն է»:

(ՀՍՍՀ սահմանադրություն, Հոդված 66)


Ընդհանուր տեսքը հարավ արևմուտքից



ՀՍՍՀ Շամշադինի շրջանի Չինչին գյուղից դեպի հարավ-արևմուտք 5 կմ երկարությամբ ձգվող անտառային ճանապարհը տանում է միջնադարյան Հայաստանի ինքնատիպ հուշարձաններից մեկի՝ Կապտավանքի մոտ: Գեղատեսիլ ձորերի ու անտառախիտ սարերի հարևանությամբ գտնվող գողտրիկ կառույցը բնության և ճարտարապետության ներդաշնակ կապի վառ օրինակ է:

Ծրբեմնի վանական համալիրից կանգուն է մնացել միակ եկեղեցին, որի հարավային և արևմտյան ճակատներին կից պահպանվել են գավթի և այլ կառույցների հետքեր:

Եկեղեցին արտաքինից ուղղանկյուն (11,40×9,46 մ), ներքուստ խաչաձև հատակագծով գմբեթավոր զահլիճ է: Կառուցվել է XII դ. կեսին (արևմտյան պատի արձանագրության համաձայն օժվել է 1151 թ.): Արձանագրություններում այն հիշատակված է Ս. Աստվածածին անունով: Իրականացված է կապտավուն երանգի կոպտատաշ ու անմշակ կրաքարով (հավանական է, որ քարի գույնից էլ ստացել է իր անվանումը): Մասամբ սրբատաշ են միայն կոնստրուկտիվ պատասխանատու մասերը՝ կամարները, թաղերը և այլն: Արևելյան կողմում գտնվում է կիսաշրջանաձև ավազ խորանը: Եկեղեցու շորս անկյուններում տեղադրված են միահարկ ավանդատներ, որոնցից արևմտյան զույգը լուսավորվում է համապատասխանաբար հյուսիսային և հարավային կողմերի պատուհաններով: Ավանդատների անկյուններից բարձրացող կամարներին հենված է ներսից զանաձև, արտաքինից ութանիստ թմբուկը: Անցումը փքեթատակ քառակուսուց շրջանաձև հիմքին իրականացված է առաջատային փոխանցումների միջոցով: Հուշարձանի միակ հարդարված մասը թմբուկը պսակող բարդ տրամատավոր քիվն է: Վերջինիս, ինչպես և նրա տակ գտնվող սրբա-



ներքին տեսքը դեպի արևմուտք

տաշ քարերի շարքի արևմտյան կողմում փորագրված են ուշագրավ բանդակներով խաչպատկերներ: Մուտքերը արևմտյան և հարավային կողմերից են: Դրանք ներքուստ ավարտվում են որմնակալմարներով: Մուտքերի բարավորները և եզրերը իրականացված են խոշորաչափ անկանոն ձևի քարերով:

Եկեղեցու վրա նկատելի են տարբեր ժամանակներում մանրաչափ քարերով կատարված նորոգումների հետքեր: Գմբեթը, ինչպես երևում է թմբուկի պատերի մեջ օգտագործված ուշ միջնադարյան խաչքարերից, հետագա վերակառուցման արդյունք է: Ներքուստ կառույցի պատերին տեղ-տեղ պահպանվել են 2—3 շերտ ավազի մնացորդներ:

Եկեղեցու ներսում գտնվում են խաչքարերի մեծ թվով բեկորներ՝ պատված բուսաներկրաչափական զարդամոտիվներով: Աչքի է ընկնում դրանցից մեկի վրա պահպանված միահյուսված զույգ թռչունների պատկերաքանդակը: Խաչքարերից (XII դ., ներկայումս չարդված) երկուսի առանձին իրականացված վերնամասերը, որոնց եզրերն ունեն զոգավոր կտրվածք-



Աեւմտյան մուտքի բարավորի արձանագրութեանը եկեղեցու օժման մասին

ներ, մետաղական պահանգներով կապված են եղել բուն խաչքարերի հետ:

Վանքը ժամանակին եղել է պարսպապատ, շուրջը տարածվել է հին բնակատեղի (այժմ չի պահպանվել):

Եկեղեցուց մոտ 50 մ հարավ-արևելք գտնվում է հին զբրեզմանոց: Վերջինից մի փոքր հյուսիս պահպանվել են երեք կրահորեր: Իսկ մոտ 1 կմ դեպի հարավ-

արևմուտք անդեղախոր ձորերը եզերող անառիկ ժայռազանգվածներում կան կրաշաղախով և անմշակ քարերով ամրացված թաքստոցներ:


Եկեղեցու շրջակայքում բխում են սառնորակ աղբյուրներ: Մեր օրերում դրանցից մեկի վրա (եկեղեցու հարավ-արևմուտյան կողմում) կառուցվել է հուշարձան աղբյուր:




Ներքին տեսք



Ղեղճանու տեսք արևելից



Խաչարի քեկու



Խաչաբազմի բեկոր

Քարտաշյան Հրաչյա Կամոյի  
Կապտավանք

Մասն. խմբագիր՝ Գ. Ս. Շախկյան  
Խմբագիր՝ Ս. Վ. Ստեփանյան  
Նկարիչ՝ Ս. Ս. Մկրտչյան  
Տեխն. խմբագիր՝ Ա. Գ. Ասրյան  
Վերստուգող սրբագրիչ՝ Գ. Հ. Ղազարյան

© ՀՍՍՀ պատմության և կուլտուրայի  
հուշարձանների պահպանության ընկերու-  
թյուն

Հանձնված է շարվածքի 21.07.1986 թ.:  
Ստորագրված է տպագրության  
14.07.1987 թ.: Ֆորմատ՝ 84×108<sup>1</sup>/<sub>32</sub>:  
Քուղթ՝ «Կավճապատ», տպագր. 0,42  
պայմ. մամ., հրատ.՝ 0,4 մամ.: Պատվեր  
774: Տպաքանակ 10000: Գինը 15 կոպ.:  
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրա-  
ֆիայի և գրքի առևտրի գործերի պետական  
կոմիտեի № 2 տպարանի մասնաճյուղ,  
Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. № 26: